ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ԵԹԿՊԻ-ԳՀԾՁԲ-26/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17 հունիսի 2026թ.

2026թ-ի հունիսի 15-17-ը, Ք. Երևան, Ամիրյան 26 հասցեում գտնվող «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի շենքում տեղի ունեցավ բժշկական ապահովագրության ձեռքբերման թիվ **ԵԹԿՊԻ-ԳՀԾՁԲ-26/3** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Հ. Նալբանդյան | «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ, |
| Ն. Ղալումյան | «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հաշվապահ, |
| Հ. Հակոբյան | «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ռեկտորի օգնական: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Նալբանդյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարությունների տեքստերը հաստատելու և Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ-ի հունիսի 15-ին՝ ժամը 11:00-ին, Ք. Երևան, Ամիրյան 26 հասցեում գտնվող «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի շենքում Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային գները.

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Առաջարկվող առավելագույն գինը՝ 1 աշխատակցի հաշվարկով մեկ ամսվա համար (ՀՀ դրամ) | Գնման հայտով սահմանված ընդհանուր առավելագույն գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1-ին | Առողջության ապահովագրման ծառայություններ | 10,000.00 | 21,600,000.00 |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված նշումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ-ի հունիսի 15-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՔՍՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ-ի հունիսի 17-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

2. Հաստատել Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարությունների տեքստերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Հ. Նալբանդյան ________________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ն. Ղալումյան ________________

Հ. Հակոբյան ________________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ________________